

ասացեալ սրբոյն Գրիգորի Աստուածաբանի,  
 ...ի վայելումն եւ յիշատակ... աչք Յովա-  
 նէս հեղահողի ընտրեալ քահանայի, որ մա-  
 կանուամբ կոչի Քարմատանենց...: Բայց  
 գրեցաւ սա ի թվին Հայոց (Ձգ ||| ին տողին  
 վրայ գրուած եւ ջնջուած) քառիցս (ի լուս-  
 չորիցս) յիննակի եւ Գ յորելինի, այլ եւ էրզի  
 աւելորդի, Օգոստոսի ԺԷի, ի տիրախնամ եւ  
 աստուածապահ մայրաքաղաքս Լէվ կոչե-  
 ցեալ, ի դուռն Ննջման սուրբ Աստուածածնի,  
 ձեռամբ մեղսամած եւ փծուն գրչի, Սիմէոն  
 գպրի Չամոսցացո»:

Գրչութեան տարին, զոր բառախաղով  
 ուզած է տալ Սիմէոն, կ'երեւայ թէ խանդա-  
 րում մը կրած է: Ձեռագրին մէջ Հայոց բառին  
 վրայ մանրագիր գրուածք մը կայ, որ՝ մա-  
 սով ջնջելու փորձ մ'եղած ըլլալով, այժմ  
 դժուարաւ կը կարդացուի. կը նշմարուին տա-  
 կաւին չ գ ||| ին գրերը, զոր կ'ուզեմ կարգալ  
 եօթնհարիւր վեշտասանին, ասով կը ստա-  
 նանք  $716 + 4 \times 50 + 3 \times 50 + 7 = 1624$ : Այս թուականին Սիմէոն Լվով կը  
 գտնուէր, ինչպէս պիտի տեսնենք: Հ. Տա-  
 չեան կը գրէ պարզապէս թէ գրչութիւնը  
 «1700էն յառաջ ըլլալու է» (անդ, էջ 366):  
 Հ. Ալիշան անգամ մը փորձած է կարգալ  
 «1618?» (էջ 174), այսպէս հարցականով,  
 ուրիշ անգամ «1659» (էջ 193): Աւելի դիւ-  
 րին պիտի ըլլար՝ 357 ստանալէ ետքը են-  
 թադրել 700 եւ ամբողջին մէջ տեսնել